



Անցյալ` 2010 թվականը «Էրեբունի» պատմահնագիտական արժեք-թանգարանն ամփոփեց համացանցում իր վեբ-կայքի բացմամբ: 2010թ. դեկտեմբերի 29-ին արժեք-թանգարանի աշխատակազմի, լրատվամիջոցների ներկայացուցիչների և հյուրերի մասնակցությամբ թանգարանի ժամանակավոր ցուցահանդեսների սրահում տեղի ունեցավ [www.erebuni.am](http://www.erebuni.am) -ի շնորհանդեսը:

Ողջունելով ներկաներին` արժեք-թանգարանի տնօրեն Գագիկ Գյուրջյանը կարևորեց ինտերնետային էջի` որպես հավաստի տեղեկատվական ռեսուրսի, ինչպես նաև առանց տեղեկատվություն տարածելու անհրաժեշտությունը: Նա նաև նշեց, որ ունենալ վեբ-կայք ինքնին նշանակում է մշտապես ներկա լինել հասարակության համար . հետևաբար նաև մեծանում է արժեք-թանգարանի պատասխանատվությունը հանրության առջև:  
Գ.Գյուրջյանը հույս հայտնեց, որ վեբ-կայքը կնպաստի Էրեբունիում պահվող թանգարանային հարուստ հավաքածուի հանրահռչակմանը և նորանոր այցելուներ կրելի հնավայր ու թանգարան:

Կայքի կառուցվածքը ներկայացրեց ծրագրավորող Ռուբեն Մնացականյանը` մեկնաբանելով գրաֆիկական միջավայրի համար օգտագործված լոգոտիպն ու խորհրդանշական պատկերները (Սարդուրի 2-րդի սաղավարտից մանրամասն, հատված «Վազող նժույզը» որմնանկարից, եղջերազավաթների պատկերներ և այլն ). Էրեբունի, Թեյշեբահնի և Շենգավիթ հնավայրերի մասին տեղեկատվությունից զատ, կայքը ներառում է նաև թանգարանին, հուշանվերների կրպակին, տարվա ընթացքում տեղի ունեցած միջոցառումներին վերաբերող բաժիններ, հնարավորություն է տալիս հեշտորեն «նավարկել» բաժնից-բաժին, բեռնել համապատասխան լուսանկարներ, տեսանյութեր և մամուլի հաղորդագրություններ: [erebuni.am](http://erebuni.am) -ի մուտքը համացանց ողջունեցին Հայաստանի Ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանը, հեռուստալրագրող Արփեն Մովսիսյանը: Կարևորելով լրատվամիջոցների դերը պատմամշակութային ժառանգության պահպանության և օգտագործման խնդիրների մեկնաբանման գործում` արժեք-թանգարանի տնօրեն Գ.Գյուրջյանը շնորհակալություն հայտնեց բոլոր այն լրատվամիջոցներին և լրագրողներին, ովքեր անցած տարվա ընթացքում իրենց

ռեպորտաժներով և հոդվածներով անդրադարձել են «Էրեբունի» արգելոց - թանգարանին՝ հանրության և պատկան մարմինների ուշադրությունը հրավիրելով առկա խնդիրների լուծմանը : Թանգարանային հավաքածուից ընտրված առարկաների պատկերների օգտագործմամբ արգելոց – թանգարանի կողմից թողարկված խորհրդանշական նվերներ՝ եղջերազավաթներ ստացան «Голос Армении» թերթի թղթակից Տիգրան Միրզոյանը, «Առավոտ» թերթի մշակութային էջը, հեռուստալրագրող Արփեն Մովսիսյանը:

[erebuni.am](http://erebuni.am) -ը եռալեզու է՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Ներկայումս այն ակտիվ է միայն հայերենով: Ռուսերեն և անգլերեն տարբերակները կգործարկվեն 2011-ի 1-ին եռամսյակի ավարտին: